

ՍԻՆԿԱՓՈՒՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՎՈ 150-ԱՄՅԱԿԸ

Սինկափուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո օծման 150-ամյակի հանդիսությունները սկիզբ առին 1985 հունիս 9-ին, երբ Սիտնիի Ս. Հարություն եկեղեցվո մեջ հընթացս ս. պատարագի ընթերցվեցավ Ապգիս Սինկափուրի ու Ծայրագույն Արևելքի գաղութներու փառավոր անցյալը ու Հայ Եկեղեցվո ունեցած կարևոր դերը:

Նույն օրը, հունիս 9-ին, առաջին պաշտոնական ճաշկերույթը տեղի ունեցավ, որուն հաջորդեց երկրորդ մը տարվույս մայիս ամսուն: Շուրջ տարի մը Սիտնիի և Սինկափուրի միջև կապմակերպչական աշխատանք տարվեցավ, որուն մեջ գլխավոր

Ավստրալահայ ուխտավորների խումբը. կենտրոնում՝ Աղան եպս. Պալիոպյանը

Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսի սրբատառ կոնդակը, ուր և ավստրալահայոց առաջնորդ Աղան եպս. Պալիոպյան հավուր պատշաճի քարոզեց, վեր առնելով

դեր ունեցավ տիար Արշակ Գոլստըն: Ու ահա սկիզբ առավ եկակի ուխտագնացություն մը:

Շորեքշաբթի 11 հունիսին, առաջնորդ Աղան եպս. Պալիոլյան, Արամայիս ավագ քին. Միրզայան, սարկավագներ ու հավատացյալներ հավաքված Սիտնիի Ս. Հարություն եկեղեցվո մեջ, եկեղեցական կարճ, սակայն հուզումնալից արարողութենե մը ետք, ճամբա ելան դեպի Սիտնիի օդակայան, իրենց ուխտավորությունը սկսելու: Շուրջ ութ ժամվա հաճելի թռիչքե մը ետք, օդանավը վայրէջք կատարեց Սինկափուրի օդակայանը, ուր եկեղեցական դասուն և ուխտավորաց դիմավորության եկած էին Սինկափուրի հայերը, գլխավորությամբ եկեղեցվո ատենապետ՝ տիար Զարեհ Մարլյանի: Բարի գալստյան ջերմ ընդունելութենե ետք, ուխտավորները առաջնորդվեցան հյուրանոց:



Սինկափուրի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Հաջորդող օրերուն Ծայրագույն Արևելքի կանական քաղաքներեն հայ ուխտավորներ ժամանեցին ու մաս կազմեցին եկեղեցվո 150-ամյակի տոնախմբությանց. Ավստրալիա. Սիտնի՝ 25 հոգի, Փըրթ՝ 2: Ֆիլիփինն. Մանիլա՝ 3, Հոնկ Գոնկ՝ 3: Թայլընտ. Պանկգոգ՝ 4: Ճաբոն՝ 1: Ամերիկա. Ս. Ֆրանսիսքո՝ 10:

150-ամյակի տոնակատարությունները ըս-

կրսան շաբաթ 14 հունիսին, ուր եկեղեցական դասը Աղան եպիսկոպոսի նախագահությամբ խորանի լվացման արարողությունը կատարեց, ապա սինկափուրահայերու և ուխտավորներու ներկայությամբ պաշտվեցավ երեկոյան հոգեվայլ ժամերգությունը, որու ավարտին հատուկ հոգեհանգիստ տեղի ունեցավ եկեղեցվո հիմնադիրներու, բարերարներու, հոգևոր հովիվներու և Ծայրագույն Արևելքի համայն հայ նվիրեցյալներու հոգիներուն համար: Բոլորի աչքերուն մեջ արցունք կար:

Ավելի ուշ բոլորն ալ ներկա եղան պաշտոնական ընդունելության: Հանդիսավարությունը կատարեց տիար Զարեհ Մարլյան, որ առաջին առիթով բաժակ առաջարկեց Սինկափուրի նախագահի և Ամենայն Հայոց կաթողիկոսի արևշատության համար: Ներկաներ հոտնկայս խմեցին նախագահի ու Վեհափառի պատվին առաջարկված կենացները ու միաբերան երգվեցավ «Ամեն հայի» հայրապետական մաղթերգը:

Ընդունելության ընթացքին հաջորդաբար խոսեցան տիար Արշակ Գոլստեն, տիար Ապատ Ապատխանյան՝ Ս. Ֆրանսիսքոյեն, տիար Բոպերթ Փափազյան՝ Պանկգոգեն, Արամայիս ավագ քահանա և Աղան եպիսկոպոս: Իսկ սարկավագներեն Վարդան Էլմասյան և Հովհաննես Գարաճյան իրենց մեղմանուշ ձայնով, հայրենաշունչ երգեր հրամցուցին ներկաներուն՝ խլելով երկարատև ծափեր օտարության մեջ ապրող հայրենակարոտ հայորդիներեն:

Կիրակի 15 հունիսին, Սինկափուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեջ մատուցվեցավ ս. պատարագ, եկեղեցվո օծման 150-ամյակի առիթով: Ավստրալահայոց առաջնորդ Աղան եպս. Պալիոզյան մատույց օրվա հանդիսավոր ս. պատարագը: Ս. պատարագին ներկա էին բոլոր ուխտավորները, Սինկափուրի փոքրաթիվ հայությունը, քույր Եկեղեցիներու ներկայացուցիչներ, ինչպես նաև դատիոյի, մամուլի և հեռատեսիլի ներկայացուցիչներ: «Հայր մեր»-ի պահուն Արամայիս ավագ քահանան ի լուր ժողովրդյան ընթերցեց Ազգիս Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որուն անգլերեն թարգմանությունը ընթերցեց Աղան սրբազան հայրը, ու ապա քարոզեց հայերեն և անգլերեն լեզուներով: Սրբազան հայրը իր քարոզին մեջ վեր առավ Ծայրագույն Արևելքի հայ գաղութներու հարուստ անցյալը ու Հայ Եկեղեցվո ունեցած դրական ներդրումը այդ գաղութներու հայապահպանման աշխատանքին մեջ: Ան բոլոր ներկաները օրհնեց ու թելադրեց որ կապված մընան իրենց նախնյաց սուրբ հավատքին ու հայրենասիրության: Բոլոր ներկաները ս. հաղորդություն ստացան: Պատարագի ավարտին տեղի ունեցավ ԱՆԴԱՍՏԱՆ, Հայ Եկեղեցվո հատուկ հոգեվայլ արարողությունը, որ արժանացավ հայ և օտար ներկաներու ուշադրության և գոհունակության:

Պատարագեն ետք Սինկափուրի եկեղեցվո վարչությունը թեյասեղանով ու պատշաճ հյուրասիրությամբ պատվեց ուխտավորները:

Հիշյալ պատմական օրվան առիթով Սինկափուրի հեռատեսիլի, դատիոյի ու մամուլի ներկայացուցիչներ ժամանակեն առաջ ներկա էին, հարցազրույց, ձայնագրություն ու նկարահանում կատարելու, որոնք ամենայն բծախնդրությամբ հետևեցան եկեղեցական արարողությանց և աշխարհիկ հանդիսությանց, նույն և հաջորդող օրերուն հեռատեսիլի, դատիոյի ու մամուլի միջոցավ հաղորդելու 150-ամյակի հանդիսությունները Սինկափուրի 2,5 միլիոն բնակչության:

Սինկափուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, երկրի առաջին քրիստոնեական տաճարն է ու այժմ պատմական հուշարձաններու շարքին անցած հաստատություններեն մեկն է:

Մեր ուխտավորաց խումբը 18 հունիսին ողջմամբ ժամանեց Սիտնի:

Անցնող օրերը պատմական արժեք և եկակի նշանակություն ունեցող օրեր էին, ուր հայ եկեղեցվո կամարներուն տակ հավաքվեցան Ծայրագույն Արևելքի մեջ ցրիվ եկած «հայու բեկոր»-ները, լիցքավորվելու հայու հավատքով ու հայրենասիրական զգացումներով:

Երանի եկեղեցի շինողաց, երախտավորաց, պտղատվից և սպասավորաց...

«Թագաւոր երկնաւոր, վեկեղեցի քո անշարժ պահեա. և վերկրպագուս անուանդ քում պահեա. ի խաղաղութեան. ամէն»:

ԱՂԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԻՈԶՅԱՆ